Բանաստեղծը ուզում է, որ իր գրվածքները լսելի լինեն միշտ, անգամ իր մահից հետո:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Այս աշխատանքում փորձել եմ նկարագրել մարդու էությունը:

Յոթանասուն Հազար Ասորացի 1934

Ամեն ոք այս աշխարհում ինչ-որ մեկից լավն է եւ ինչ-որ մեկից վատը:

Հարություն 1935

Երեխայի ուղին թարմ է, Էներգիայով հարուստ, հետաքրքիր, անմեղ, պատկերավոր, առողջ եւ հավատով լի, իսկ տարեցներինը՝ ավելի շատ թոռոմած, հոգեպես պղտոր, զուրկ երեւակայությունից, անառողջ եւ հավատը կորցրած:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Հավատում եմ, որ կան ճանապարհներ, որոնք տանում են դեպի կյանք, այլ ոչ թե մահ:

Անդրանիկը եւ Հայաստանի Ոգին 1936

Իմաստուն մարդիկ լավն են, որովհետեւ իմաստություն են ձեռք բերում անհաջողությունների միջով անցնելիս:

Սարոյան

Իմ կյանքում կատարյալ անհաջողության եմ ենթարկվել, բայց միշտ իրականության հետ եմ աշխատել:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Դու մերժում ես փառքը, դավաճանում ինքդ քեզ, դու դավաճանում ես մարդկային ռասսան, երբ հավատում ես, որ ճշարտության ուղին ընկած է ամբոխի հիմքում, ընդունում ես այն, հաստատում, որովհետեւ քեզ այդպես հարմար է, եւ պետք չի լինում փնտրել իրական ճշմարտությունը եւ չես գնում ճշմարտության ուղիով. կարծես թե այն գոյություն չունի:

Ահա եկավ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Հրամանը, որ հայտնաբերեցի, հրաման չտալն է:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Իրական պատմությունը երբեք հնարավոր չէ պատմել: Դա անպատմելի է: Իրականությունը (որպես իրականություն) անհասանելի է, անցնելով ժամանակի միջով: Կարիք չկա նայել անցյալին, հավաքագրել այն, հետազոտել, բացառությամբ արվեստի. այն մտքի իրականությունն է:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Անհնար է չնշել այն, որ մեր աշխարհը պատված է անհաջողությամբ, ատելությամբ, մեղքով եւ վախով:

Նամակ Ռոբերտ Ե. Շերվուդին 1946

Արվեստի դերն է ստեղծել այնպիսի մի աշխարհ, որը տանելի լինի:

Մարդկային Կատակերգություն 1943

Շատ հասարակական վայրերում, ձանձալի, անհեթեթ, դաժան, կոպիտ, տհաս, կամ նույնիսկ թերի մարդկանցից կամ իրադարձություններից պետք է փնտրել, առանձնահատուկ, լավ, հումորային պահեր, եւ ես այդպես էլ արել եմ:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Ես երբեք չեմ հետաքրքրվել ակնհայտի մանրամասներով, թե ով ինչ արեց, բայց թվում է, որ յուրաքանչյուր ոք հետաքրքրված է ակնհայտ բաներով, հմայված դրանով եւ հավիտյան կրկնում է այն մանրամասները, որ շատ վաղուց ես արդեն կշռադատել եմ, չափել եւ դուրս շպրտել որպես անտեղի եւ անօգուտ: Եթե կարող եք չափել այն, մի արեք: Եթե կարող եք կշռադատել այն, անտեղի ժամանակ կկորցնեք: Դուք ոչ մի բանից հետ չեք ընկնի: Պետք չէ հասնել դրան: Իմ իմաստությունը տեսանելի էր, ինչպես տեսողությունը: Ես նայեցի, տեսա, հասկացա, զգացի. «Ահա, թե ուր ենք մենք գնալու»:

Ահա եկավ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Ոչ մի հիմք: Ամենուր դատարկություն է: Ոչ մի հիմք:

Քո Կյանքի Ժամերը

Ամեն ոք այս կյանքում այս թե այն կերպ մուրացիկ է, խոշոր կամ մանր: Քահանան Աստծուց բարություն է խնդրում, եւ թագավորն էլ ինչ-որ մեկից ինչ-որ բան է մուրում: Երբեմն ժողովրդից հավատարմություն է խնդրում, երբեմն աղաչում Աստծուն ներել իրեն: Ոչ ոք այս կյանքում չի ապրել 10 տարի չաղաչելով Աստծուն ներել իրեն:

Մուրացկանները

Դու միշտ պետք է հիշես տալ ուրիշներին այն ամենը, ինչ ունես: Անգամ եթե տալը հիմարություն թվա: Դու պետք է լինես ողորմած: Պետք է տաս յուրաքանչյուրին, ով հանդիպում է քեզ կյանքում: Այդ դեպքում ոչ մի բան եւ ոչ ոք մոլորության չի մատնի քեզ: Եթե գողին տաս ունեցածդ, նա չի կարողանա գողանալ քեզանից, եւ այդ դեպքում նա այլեւս գող չի լինի: Եւ ինչքան տաս, այնքան ավելի շատ ես տալու:

Մարդկային Կատակերգություն

Ոչ սերը, ոչ ատելությունը, ոչ էլ մարդկային կյանքի ամենաամուր հավատարմությունը, չեն կարող փոխարինել մարդու հոգու ազատությանը եւ բարի լինելու անհրաժեշտությանը:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Որն է մարդկային կյանքի նպատակը: Կենդանական մակարդակով վերցրած այն է՝ խուսափել հնարավոր ցավերից: Եթե դա հնարավոր չէ, ապա մարդկային մակարդակը կմեղմացնի այդ ցավը: Անձնական մակարդակում, մարդու նպատակն է լինել յուրահատուկ ի ծնե, առանձնահատկությունը անավարտ է, չնայած որ շատ անհատների մոտ այն ավարտվում է դեռ չսկսված:

Ամեն մարդու իրավունք է տրված ապրելու եւ գործելու, եւ եթե ինքը չի փոխում այս կյանքում ինչ-որ բան, ապա գոնե փոփոխությունները պետք է հասկանա ինքուրույն…

Մարդը դժբախտություն է, բայց նա կարող է խուսափել դժբախտությունից ուղղելով իր սեփական սխալները, եւ ուղղել, հասկանալ, ճանաչել, փոխել իր ճակատագիրը, որը ծնվել է իր հետ, որոնցից ամենագլխավորն է՝ շարունակել կյանքը, փոխել իր իրավունքները: Մարդ պետք է վերադառնա իր ակունքներին ինքնուրույն, եւ պահպանի իր իրավունքները, ինչքան էլ որ դա դժվար եւ ցավոտ լինի:

Ահա եկավ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Բարոյապես չմահանալու համար անհրաժեշտ է հույս, զորություն, ճշտություն եւ առողջ բանականություն:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952

Ամենամեծ երջանկությունը այն է, երբ երջանկություն պահանջելու անհրաժեշտություն չկա:

Իմ Միրտը Լեռներում է 1939

Կյանքդ ապրիր այնպես, որ նրա ընթացքում ոչ քեզ ոչ էլ քեզ շրջապատողներին չպատեն տհաճությունն ու մահը: Ամենուր բարություն փնտրիր եւ երբ գտնես, դուրս հանիր նրան իր թաքստոցից, որպեսզի այն տեսանելի լինի բոլորի համար: Գտիր նրա համապատասխան տեղը եւ արժեքը, քանի որ այն կարող է կանգնեցնել մահը, չնայած որ անցողիկ է: Հայտնաբերիր լուսավորը, քանի որ այն հեռու է խարդախությունից: Եթե առաքինությունը մեկի սրտում թաքնվել է՝ վախեցած այս աշխարհի չարիքներից, խրախուսիր նրան եւ դուրս հանիր իր թաքստոցից: Արհամարհիր արտաքինը, քանի որ այն արժեք չունի պարզ աչքում եւ բարի սրտում: Ոչ ոքի մի ենթարկվիր բայց եւ քեզ մի ենթարկիր մարդկանց: Հիշիր, որ ամեն մարդ նման է քեզ: Բոլորի մեղքերը նաեւ քոնն են, անմեղներն իրենց առաքինությունը նույնպես կիսում են քո հետ: Արհամարհիր չարն ու ատելությունը, բայց ոչ չար մարդկանց. ընդունիր սա: Եղիր բարի եւ սիրալիր, բայց կյանքիդ ծանր պահին, երբ կանգնած լինես սպանություն գործելու եզրին, սպանիր եւ մի զղջա դրա համար: Կյանքդ ապրիր այնպես, որ կյանքիդ չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ապրես ժպիտով եւ բարությամբ:

Նախաբան Վիլյամ Սարոյանի Քո Կյանքի Ժամերը, Պիեսին
Պուլիցերի Մրցանակի Հաղթող 1939

Իհարկե մարդկությունը հայ է: Այլ կերպ չի կարող լինել:

Ահա եկավ, գնում է, ինքդ գիտես՝ ով

Ուսանելը, սովորելը, հարցնելը, կշռադատելը, հայտնաբերելը, ստեղծելը, տեղաբաշխելը, պահպանելը, կերտելը եւ տալը ընկած են հայի էության հիմքում:

Առաջին Այցը Հայաստան 1935

Ես այցելեցի Հայաստան, հենց որ կարողացա հավաքել անհրաժեշտ գումար:

Առաջին այցը Հայաստան 1935

Ես սիրում եմ հայ ժողովրդին. նրանցից յուրաքանչյուրին: Սիրում եմ նրանց որովհետեւ նրանք մարդկության մի մասն են կազմում, ինչը ես միաժամանակ համարում եմ գեղեցիկ եւ խոցելի:

Առաջին այցը Հայաստան 1935

Ամբողջ աշխարհը եւ նրանում ապրող ամեն մի բանական էակ, բոլորինս է:

Իմ Սիրտը Լեռներում է 1939

Ահա այստեղ էլ կավարտեմ այպես, ինչպես սկսել էի.

Բանաստեղծը ուզումէ, որ իր գրվածքները լսելի լինեն միշտ, անգամ իր մահից հետո:

Բեվերլի Հիլզի հեծանվորդը 1952